ԲԻՈԷԹԻԿԱՅԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ «ԿԱՆԱՉ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 4-13-ը ԵՀԽ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հրավերով, «Կանաչ աստվածաբանություն» ծրագրի շրջանակներում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում էր գտնվում Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Ս. Անդրեաս առաքյալի անվան աստվածաշնչային-աստվածաբանական ինստիտուտի դասախոս Պյուրր քահանա Կոլոմեյցևը:

Այս օրերի ընթացքում նա բիոէթիկայի արդի խնդիրների մասին դասախոսություններով հանդես եկավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, իսկ դեկտեմբերի 11-ին՝ Ս. Էջմիածնում: «Աստվածաբանության, փիլիսոփայության և գիտության հարաբերակցության հեռանկարները» վերտառությամբ բանախոսությունը նվիրված էր մեր ժամանակներում աստվածաբանության, փիլիսոփայության և գիտության փոխհարաբերություններին:

Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ, ինչպես նաև ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողներ:

Նույն՝ «Կանաչ աստվածաբանություն» ծրագրի շրջանակներում դեռևս հուլիսի 21-23-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ սեմինար-խորհրդաժողով՝ «Կանաչ աստվածաբանություն» թեմայով, որի ընթացքում «Արարումը Հին Կտակարանում», «Արարումը Նոր Կտակարանում», «Ուղղափառություն և բնապահպանություն. ծես, պատկերագրություն», «Ուղղափառություն և բնապահպանություն. հայրաբանություն» թեմաներով դասախոսություններով հանդես էր եկել Օքսֆորդի համալսարանի դասախոս պրոֆ. Դիմիտրի Օյկոնոմուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ